

Սպարտա պահի նոցա պատիւ 'ի միում' ուրեք ճակատամարտի կալ պատերազմակից առննթեր արքայի . գրեթէ ամենայն ուրեք նախագահք բազմին 'ի տեսարանս խաղուց . և մեծարանաց անունն ոլիմպիայաղթ յաւելեալ 'ի նոսա՝ պատուականս և պատկառելիս առնէ զնոսա առաջի ամենեցուն , երանաւետեալ զկեանս նոցա :

Սմանք 'ի նոցանէ փառացն իւրեանց հաղորդս առնելով և զձիանն՝ որք զօրավիգն եղեն նոցա 'ի ստանալ զայնս , ծերատածեն զնոսա 'ի հանգստեան , և թաղեն զնոսա պատուով . են որք և բրգունս 'ի վերայ գերեզմանաց նոցա կանգնեն :


Սղափա :

Հեբրիդեան կղզիները , որ երեքհարիւրի մը չափ կը համրուին , Սկոտլոյ արեւմտեան կողմը տարածուած են . Սրատհի հրուանդանէն սկսեալ մինչև Վէնդիւրի թերակղզին , որ է ըսել լայնութեան 56⁰էն ինչուան 59⁰ և երկայնութեան 8⁰էն ինչուան 10⁰ : Ընդդիացեաց աշխարհագիրները Հեբրիդեան ըսեր են աս կղզիներուն՝ լատինական էպոպէ անունը աղաւաղելով , որ իրենց դրքին նայելով Բրեմտայք ըսել է . ասոնք ատենօք միջին դարու ժամանակ գիտութեց , արհեստից և քաղաքականութեան պատսպարան եղած էին . ասոնց մէջ հիմա միայն 86⁰ բնակիչ ունի , մեծաւ մասամբ ձկնորս և երկրագործ , և առջի հին Հիւսիսայնոց պէս վայրենի և բարբարոս : Բայ և այլ շէնքերու մնացորդներէն կը տեսնուի որ գութայի ճարտարապետութեամբ շինուած են եղեր , ինչպէս նաև իր փառաւոր մայրեկեղեցւոյն աւերակներէն ալ , որ վեցերորդ դարուն շինուած է Ս . Վրդում պանի ձեռքով : Բայց արդի եղած շէնքերը բոլորն ալ Լաբնիայի ու Վամ լատքական տձև ճարտարապետութիւն կանգնուած են : Վանի մը կղզեաց մէջ ,

ուր և ոչ պզտի հիւղ մը կը տեսնուի՝ հին վանքերու ու վարժատուններու մնացորդներ կը գտնուին . և ուր որ ատենօք Սկոտլոյ թագաւորաց գերեզմանները կան եղեր՝ այս օրուան օրս ծովային թռչնոց բոյն եղած է : Բնակով եղեր է ահա որ ան կղզիներուն մէջ փոխանակ յառաջադիմութեան՝ կամաց կամաց գիտութեանց լոյսը մարեր , քաղաքականութիւնն ին խանգարեր է , և ոտն առ ոտն նորէն դէպիրենց հին բարբարոսութեանը դարձեր են :

Սակայն ժամանակը որ կրցեր է մարդկանց ճարտարութեան հրաշալիքը բոլորովին անհետ ընել , բաց 'ի քանի մը չնչին յիշատակարաններէ , բնութե այս սքանչելի կերտուածները և ոչ փութաւ իւրիք կրցեր է անշքացնել : Հեբրիդեանք , ինչպէս նաև աշխարհիս վրայ այն ամէն տեղերն որ ծովուն և հրաբխից կատաղութեանն են թակայ եղեր են , այնպիսի վսեմ և նորատեսիլ հրաշակերտներ աչքերնուս կ'ընծայեն՝ որ երկու տարերաց , այսինքն ջրոյն և հրոյն ահեղ զօրութիւնը մէկէն յայտնի կը տեսնուի : Բայ մասին մէջ Սղափան կրնայ իրաւցընէ բոլոր արեւմտեան արշիպելագոսին մայրաքաղաքը ըսուիլ . վասն զի Հեբրիդեանց մէջ չկայ ուրիշ կղզի մը , որուն վրայ ասոր չափ բնութիւնը աշխատած ըլլայ :

Սղափա կղզին 12 միլնի չափ հեռու է Սլլ ըսուած մեծ կղզիէն , որուն արեւմտեան կողմը կ'իյնայ , և անոր Վոպէրմըրի գլխաւոր քաղքէն ամէն տարի խիստ շատ ձկնորսներ հոն ընկա ձկան որսորդութեան կ'երթան : Սղափային ձեւականոն հաւկրթած և մին է կէս փարսախ շրջապատով , և ջրին երեսէն 120 ոտք բարձր է : Բոլոր կղզին ամբողջ հանքային ու մետաղական զանգուած մըն է , և մասնաւորապէս սլազալդ ըսուած քարէն . այս ժայռերը ատենօք ծովային հրաբուխներուն բռնկելով , հալած դուրս պոռթկացեր և մինչև ջրին երեսը ասդին անդին ցրուեր մնացեր են : Բոնք զանազան բարձրութիւն և մեծութեամբ հատուածակող



Սդաֆա :

մեան կոթողներ են , որուն պատճառը բնագէտները սաստիկ հալած վիճակէն յանկարծական պաղելուն կու տան . աւտոնց տրամագիծն է , առանց երկրաչափական ճշդութեամբ խօսելու , չորսէն մինչև տասը ոտք , և ձևերնին ալ ոմանց ութանկիւնի և ոմանց ալ վեցանկիւնի : յըբերնին ընդհանրապէս ուղղահայեաց է . իսկ իրենց արմատը լաւայի ահագին զանգուած մըն է կարծրակուռ ու խառնափնդոր : Սդաֆա ահագին , լերկ , կոփածոյ ժայռ մը կը տեսնուի . սրովհետեւ հեբրիդեանց այն մասը որ հիւսիսի սարսափելի փոթորիկներէն յաճախ կը ծեծուի՝ այնպէս ամայի ու անապատացեալ է , որ բաց ի պաղաղի կամ լաւայի քառաժայռներէն ուրիշ բան ամենևին չտեսնուիր , որով լերկ կմախքի մը պէս ասդին անդին դուրս ցցուած սեպացեալ ժայռեր , խոռոչներ

եղջիւրներ միայն կը ցուցնէ : Ըմէն կողմ կարգաւ շարուած պաղաղէ կոթողներ . չկայ ծառ մը , մէկ թուփ մը որ տեղւոյն ահաւոր միայնութիւնը փոխէ ու ժպիտ մը տայ :

Սակայն օդին ազդեցութեամբ ժայռին վերի կողմը լաւան պաղաղի հետ խառնուելով բուսանելի երկիր մը ձևացուցած է , և քամին հեռուանց խոտի հունտեր հետը բերելով առեր ցաներ է տեղ տեղ . և ուր որ կրցեր է վտանգներէ ազատ մնալ՝ բուսեր է ու կամաց կամաց երթալով տարածուելով , վերջապէս բոլոր Սդաֆայի ժայռին վրայ բարակ գորգ մը սփռեր է : Ըստ ողորմելի բուսաբերութեամբ հագիւթէ տատաւ կը տեղ տեղ թիղի մը չափ կրնայ բարձրանալ . բայց ան ալ շուտով փոթորիկներուն ձեռքէն կը հնձուի : Ինչ կատաղութեամբ որ քամիները կղզւոյն գա-

գաթը կը կռփահարեն, նոյն ուժով ալիքներն ալ իր կողերը կը բաղխեն ան դադար, որով ինչ որ ժայռին ամբողջութեանը հետ միացած չէ կը փրցնեն ու անդունդին մէջ կը գլորեն: Այսպէսով ահա քամիները ալիքներուն հետ միացած Սգաֆայի ծովափունքը գիշեր ցորեկ տաշելով կոփելով հարթայատակ մաքրեր են, որոնք պաղաղի սիրուն կութողներէն ձեւացած են և քովէ քով մէկ կարգի վրայ խիտ առ խիտ շարուած ըլլալուն համար, բարձր պարիսպներու պէս կղզիին բոլորտիքը կը շրջապատեն: Այս համակ քարաշէն բերդիս վրայ միայն կողմանէ կրնայ ելլցուիլ, որ կարծես թէ անսպառ հարստութիւններ ունեցողի մը պէս այնչափ ամուրթիւններով պատսպարուած է. ծովուն մէջ դուրս երկնցած տափարակ ժայռի թեւ մը կայ, որուն քով միայն կրնան նաւակները մօտենալ. բայց ան ալ շատ մեծ զգուշութեամբ: Ինչուան հիմա որոնք որ հոն բնակութիւն ուզեր են հաստատել, ամէնքն ալ նոյն տեղէն միայն ցամաք կրցեր են ելլալ, բայց ամէն անգամ ալ փոթորիկը զիրենք վաներ է. այնչափ անմատչելի է աս կղզիս:

Ղրուալիոս Ուսալայի արքեպիսկոպոսը 1772ին միջոցները Վուք նաւակետին և իրեն երկու ընկերներովը աս կղզին այցելութիւն մը ընելով, գեղացիէ և կովէ մը զատ ուրիշ բան չգտան: Ուսալայի արքեպիսկոպոսը կ'ըսէ թէ՝ «Սեբ գալստեանը վրայ խեղճ գեղացին ունեցած ուրախութիւնը յայտնելու համար, բոլոր գիշերը՝ Նորուեկիայի գաւառական լեզուով երգեր երգելով անցուց, զոր մենք ամենեւին չէինք հասկընար, և մեզի կաթնեղէն ու ձու հրամցուց:», Վսան տարի ետքը բնակութիւնը շատցաւ. և ինչպէս որ ճանապարհորդ մը կը պատմէ, «Սգաֆայի բնակութիւնը, կ'ըսէ, երկու գերդաստանէ կը բաղկանար, որոնք երկու աղքատին հիւղերու մէջ ապաստանած էին, ժայռերու մէջ պաղաղի ու լաւայի կտորուանքներէ շինուած, վրան ալ խոտով ծածկուած: Այս երկու գեր-

դաստանաց անձինքը 16 հոգի էին և ունեցած հարստութիւննին ալ էր մէկ ցուլ մը, ութը կով, վեց ոչխար, երկու այծ, երկու շուն, մէկ խոզ մը, մէկ աքաղաղ և ութ ալհաւ:», Այս գաղութականները կաթնեղէնով, ձկներով ու ծովային թռչուններով և քիչ մ'ալ գետնսիւնձորով կը կերակրէին, որ ժայռերուն վրայ մեծ աշխատանքով բռնել կու տային: Իսկ խմածնին միգով ու անձրևով ժողվուած ջուր մըն էր զոր չափով կը խմէին. վառածնին ալ կտոր մը չոր խոտ էր: Երկայն տարիներ այդպիսի թշուառ կեանքի մը տառապանքներուն հետ մաքառելէն ետեւ՝ վերջապէս թողլով Սգաֆան ելան գացին: Այս դարուս սկիզբէն սկսեալ մինչև ցայսօր այս կղզիս բնակելի եղած չէ, բայց միայն երբեմն երբեմն Սըլ կղզիին ձկնորսներէն ու որսորդներէն հոս կու գան ձուկ որսալու և թռչնոց բոյներ ժողվելու համար: Եւսկէտ և մարդուս անկարելի եղած է այդ կղզւոյն վրայ ոտք հաստատելը, սակայն բնութեան գեղեցկութեանց սիրող մարդիկ երթալով կը յաճախեն իրենց այցելութիւնը: Ասան զի թէպէտ և Սգաֆայի այն գեղեցկութիւնները, զոր ինչուան հիմա ըսինք, իրաւցնէ տեսնելու ամենաարժանի հրաշալիքներ են, սակայն կղզւոյն ամենէն հիանալի շէնքը իր հրաշակերտ այրն է, որուն վրայ խոսիլը զանց կ'ընենք, արդէն ուրիշ անգամ Վազմավիպիս էջերուն մէջ խօսած ըլլալով:

Որ անարգէ զսակաւս, առ 'ի փոքր փոքր կործանեսցի:

Որ վաղվաղկոտ է 'ի հաւատալ՝ թեթեւ է սրտիւ, և որ յանցանէ և յանձն իւր մեղանչէ:

Ի բարեկամն և 'ի թշնամին մի յօժարել երկրորդէն զբանն:

Եւսկէտ ինչ բան, մեռցի անդրէն 'ի սրտի քու՝ պինդ կաց որ ոչ հերձու և ելանէ արտաքս:

ԻՄԱՍՏ · ՅԵՍՈՒԱՅ